1282. ԽԱՉԿԱՐ, գեղաքանդակ, կանգնած է գյուղամիջի բլուրի վրա. մշակված է նաև արևելյան երեսը։ Ճակատի շրջանակներին և թիկունքին։

ՍԲ.ԲԷԽՈՍ ՏՐ ՍԷԱԿԻՆԵՍ ՕՀ ԱՆՍԿԱՄՈՂ ԹՎ. ՌՃԽԷ

ՌՎՌՃԽԷ

ՇՆԱՒՐՀԻՆԱՅ
ԵՍԹԱՄՐԱՉՍՏՐՄ
ՈՒՍԷՍԱԼԱՅՊԷԿ
ՍՂԱՐԱ ԳՌԶՍՄԻ
ԱՊԱՆԿԱԿՆԵՑԻՍԲԽԱ
ՀՍԲԱՐԵԽՈՍՏՐՍՀԱԿ
ԻՆՀՕՄԵՐՈՅԵԻՄԱՄ
ԵՐՀՄԱՅԻՆ ԹՈՌ
ՆԻՍՐԱՅԵԼԻՆԻՇ
ԵՅԷԲԻՖԻՐԻՍՏՆ
Թ.

ՃԱԿԱՏԻՆ.

ՍԲ. ԽԱՉ|Ս ԲԱՐԷԽՈՍ ՏՐ ՍԷԱԿԻՆ. ԵՍ ՕՀ|ԱՆՍ ԿԱՉՄՈՂ| ԹՎ. ։ՌՃԽԷ։ (1698)։

ԹԻԿՈՒՆՔԻՆ.

ՇՆԱՒՐՀԻ|Ի՝Ն ԱՑ| ԵՍ ԹԱՄՐԱՉՍ, ՏՐ. Մ|ՈՒՍԷՍ, ԱԼԱՑՊԷԿ|Ս, Ղ.ԱՐԱԳՈՒՉՍ ՄԻ| ԱՊԱՆ ԿԱ|Ն՝ԿՆԵՑԻ|Ն՝Ք՝ ՍԲ. ԽԱ|ՉՍ ԲԱ-ՐԵԽՈՍ ՏՐ ՍԷԱԿ|ԻՆ, ՀՕ|Ր՝ ՄԵՐՈՑ ԵՒ ՄԱՐ Մ|ԵՐ ՀՄԱՑԻՆ, ԹՈՌ|Ն ԻՍՐԱՑԵԼԻՆ. ԻՇ|ԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ|. Թ.։

Ծանոթ. *Սղումները և անկանոնությունները պահպանել ենք, որպես խոսակցական լեզվի արտահայտություն։*

Վերջին ։Թ։ տառով աղեցել են թվականը գրել, բայց այն տեղափոխել են ճակատին։

Հրատարակիչների մոտ արձանագրությունը կրճատված և աղավաղված է։

Հրատ. Սմբատյանց, 630։ Լալայան, XIX, 20։

ՇԻՇԿԱՑԱ

Հին անունն անհայտ է. գյուղի հյուսիսային եզրին կա ոպիտակ հողից և քարից կազմված մի բարձր բլուր, որի գագաթին մնում են հին, փոքր ամրոցի հիմնապատերը. որա ստորոտում կան ավերակ եկեղեցու մնացորդներ և մի քանի տապանաքարեր ու խաչքարեր, որոնցից երկուսի վրա կան խիստ ջարդոտված արձանագրություններ, մեկը ։ՌԼ։ թվականով (№ 1284)։

Լալայանը հիշատակում է գյուղամիջում մի մեծ եկեղեցու հիմնապատերը և շուրջը խաչքարեր՝ XVI դարի, որոնք այժմ չկան։ Դեպի լիճ ձգվող դաշտի մեջ կա մի փոքր եկեղեցի, որի մոտ ընկած խաչքարի վրա նկատելի է ։Զ։ թվականը[1]*։*

Մեր գտած երկու արձանագրության մնացորդները հրատարակվում են առաջին անգամ։

1283. ԽԱՉԿԱՐ, գեղաքանդակ, գտնվում է գյուղի հյուսիսային եզրին, բլրի տակ գտնվող ավերակ եկեղեցու մոտ, կանգուն է, ջարդոտված ճակատին մնացել են արձանագրության մասերը, 3 տող.

. . . . . ԱՄ . . . . . .
. . . . ԴԱՆ . . . . . .
ՀՈԿ ՓՐԿՐՀԱՎ . .

...Կ'ԱՄ'ԱՒՆ ԱՑ ԵՍ՝|ՎԱ'ՐԴԱՆ....| ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ՝ՀՈԳ'Լ՝Ո՝ ՓՐԿՈՒԹԵ. ՀԱՒՐ ՐԻՄՈ...

Լուսանկ. 259

[1] «Ազգ. հանդ.», XIX, 24...

1284. ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ. նախորդին մոտ, ջարդոտված ճակատին և թևերի շուրջը 3 տող.

. . . . . ԿԱՆԿՆԵՑԻ
ՉԽԱՉՍՓՐԿ· · · ՀՈԳԻՄՈՅ

.... ԿԱՆԿՆԵՑԻ| ՉԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵ.
ՀՈԳԼՈՅ ԻՄՈՑ: ԹՎ. :ՌԸ: (1559):

ՎԵՐԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՇՈՐԺԱ. ԳՅՈՒՂԵՐ

Այս երկու փոքր գյուղերի հին անուններն անհայտ են։ Ներքին Շորժալում մնամ են մի փոքր եկեղեցու հիմնապատերը, որի մուտքի մոտ կանգնած են երկու գեղաքանդակ խաչքարեր, իրար ժամանակակից, մեկն ունի ։Զ։ թվականը. նույն տեղում կան նաև մի քանի տապանաքարեր։ Գյուղի հին գերեզմանատունը գտնվելիս է եղել եկեղեցուց ներքև, դետափին, այստեղ մնում են մի քանի տապանաքարեր միայն, մեկը կենցաղային քանդակներով՝ ։ՌԾԱ։ թվական (№ 1287)։

Վերին Շորժալում մնացել են միայն գերեզմանատան և եկեղեցու մնացորդները, գյուղից ներքև, գետափին. գերեզմանատունը ձորի լանջին է, տապանաքարերի մեծ մասը տապակ են՝ ծածկված վերևից իջնող հողով. երկուսի տապանագրերը հազիվ կարողացանք կարդալ. երկուսն էլ XVII դարի են։

Մեր ժողովածուում այս երկու գյուղերից ամփոփված են միայն 8 արձանագրություն, որոնցից 3-ն են հրատարակված եղել նախկինում։

ՆԵՐՔԻՆ ՇՈՐԺԱ

1285. ԽԱՉՔԱՐ, կանգնած է գյուղամիջի՝ ավերակ եկեղեցու մեջ. քիվին եղել է արձանագրություն, այժմ ջարդոտված. թևերի արանքներում մնացել է թվականը.



ԹՎ. :Զ: (1251):

1286. ԽԱՉՔԱՐ. կանգնած է նախորդի մոտ, գեղաքանդակ, ճակատին սրբապատկերներ, քիվին ուռուցիկ տառերով.

ՍԲ ՆՇԱՆՍ ՇԱՀՈՒՄԱՂԻՆ
ՔՍ ԱԾ

ՍԲ. ՆՇԱՆՍ ՇԱՀՈՒՄ ԱՂԻՆ. ՔՍ. ԱԾ.

Ծանոթ. *Ըստ ամենայնի նման է նախորդին, նույն ժամանակի գործ է։*

Հրատ. Սմբատյանց, 630։ Լալայան, XIX, 19։

1287. ՏԱԳԱՆԱՔԱՐ, գտնվում է գյուղամիջում, եկեղեցուց ներքև, գետափի մոտ. հյուսիսային կողին հեծյալ, ձախ ձեռքում բռնած նետ ու աղեղ, մի աղեղ էլ առանձին՝ վերևում, առջևից փախչում է եղջերու, ապա մկրատ, սրինգանման իր, ըլիթ և գավ. արևմտյան ճակատին 7 տող.

ԹՎՃԱ
ԵՍԱ
ՉԱՏ
ԿԱՆԿՆ
ԵՑԻՎԷ
ԼԻՃԱ
ՆԻՆ

ԹՎ. :ԼԻՆԾԱ: (1602). ԵՍ Ա|ՉԱՏ| ԿԱՆԿՆ|ԵՑԻ
ՎԷ|ԼԻՃԱ|ՆԻՆ: